

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրդի կէս տարվան 6 բուրդի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խորագրաւոր մէջ:

Մեր հասցեն. Тифлиси, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է առանձին լիցուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաւարանիւր բառին 2 կոպէկով.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԹԻՒՆ

Իսկ երբ պէտք է իրականացնէք.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Աշխարհագրական ըն-
կերութիւնը երկրաչափութիւնը վերաբերութեամբ.
Երկրաչափութիւնը վերաբերութեամբ. Նամակ
թէլագի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լու-
րեր.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պ. Վէլիչովի ֆիւսիօֆ
արձագանքները:

ԻՍԿ ԵՐԲՐՔ Ե ԻՐԱԿԱՆԱՅԻՆԵՐ

Յայտնի է թէ ինչ ոգևորութիւն էր
առիւթում մի ժամանակ Ռուսաստանի երի-
տասարդութեան մէջ զէպի ժողովրդին օգ-
նելու գործը: Գնալ գաւառները, մանկ
գիւղերը եւ օգտակար լինել ժողովրդին,
իրեն բժշկել, գիւղատնտես, ուսուցիչ, իր-
ւե խելացի հաւան եւ գործող—աչա
այն ձևերից մի քանիսը, որ ծրագրել էր
իր համար երիտասարդութիւնը: Այդ երի-
տասարդութեան մէջ գտնվող կովկասեցի
երիտասարդներն էլ ցոյց էին տալիս ընդ-
հանուր ոգևորութեան նշաններ եւ կարե-
ւի էր կարծել, որ արդարեւ շուտով մեր
երկիրը պէտք է տեսնի իր գաւառական
խուլ անկրթներում հասարակական գոր-
ծողներին, ժողովրդի բարեկամներին:

Սակայն, ո՞րպիսի հիասթափութիւն:
Ո՞րտեղ, ո՞ր գիւղական շրջանում դուք
կը տեսնէք բարձրագոյն դպրոցի որ եւ է
սանի, որ նուիրած լինէր իրան ժողովրդի
մուտքը եւ տնտեսական զարգացման: Ի՞նչ
աղէտի ժամանակ դուք տեսաք երիտա-
սարդներին, որոնք գնացին աղէտի տեղերը,
ինչպէս այդ արեւ են եւ անում են ուսու-
նելու երիտասարդ տղամարդիկ եւ կանայք թէ
սովի, թէ վարակիչ ախտերի տարածման
եւ թէ մի ուրիշ աղէտի ժամանակ: Ո՞ր
են, ուր, մեր երիտասարդները, որ մի որ եւ
է լայն կուլտուրական գործի մէջ ցոյց
տալին ժողովրդին օգնելու իրանց պատ-
րաստականութիւնը եւ շնորհքը:

Իսկ տեսէք ինչ խաւար եւ ծանր կեանք
է առիւթում մեր գաւառներում: Մի՞թէ բազ-
մաթիւ թղթակցութիւնները բաւականա-
չափ նիւթ չեն մատակարարում այդ կող-
մից: Գնու այս նորերս մենք տեսանք թէ
ինչպէս մի ուժեղ վաշխառու կարող է իր

ձնշման տակ պահել մի ամբողջ ժողովուրդ
եւ այդ ժողովուրդը երկրաչից եւ վախից ոչ
միայն չէ յանձնում այդ վաշխառուին դա-
տարանի եւ վարչութեան ձեռքը, այլ գեո-
գնում է սուտ վկայութիւններ տալու վաշ-
խառուի օգտին: Իսկ մի այլանդակութիւն
է, որ միայն ցոյց է տալիս թէ որքան ան-
տանելի է այն կեանքը, որ վարում է մեր
շինականը: Իսկ այն բազմաթիւ աւե-
րի: Եւ լուրջ հիւանդութիւնները, որոնք
արմատներ են ձգել մեր գիւղերում եւ
կրճում ու քայքայում են մեր ժողովրդի
առողջութիւնը: Ով է գործում գիւղե-
րում եւ ով է կանգնեցնում ժողովրդա-
կան մարմին մէջ սկսվող այդ փտուկները:
Մենք ամենքս տեսնում ենք, որ գիւղական
մեծամասնութիւնը այլ եւս անկարող է իր
ձեռքին ունեցած հողով ապահովել իր
կեանքը եւ ընկել է կարօտութեան մէջ:
Ով մեր երիտասարդներին գնաց օգնելու
գիւղականին՝ մոցնելու անտեսութեան նոր
ձևեր, սովորեցնելու արհեստներ եւ առհասա-
րակ կողմակերպելու նրա կեանքը խելացի
կերպով:

Համարեա ոչ դե: Իսկ խօսքեր, խոստում-
ներ, ժողովրդակիրութեան ձառեր որքան
կամենաք: Ոչ մի ժողով, ոչ մի ինժեք, նոյն
իսկ ոչ մի ընկերական փոքրիկ հա-
մախքում չէ անցնում առանց փրկու-
նի խօսքերի եւ վարիսցիական սրտացաւու-
թիւնների: Իսկ գործը պատմութիւն է կա-
տարողների եւ երբեք չէ տեսնում այն
բարձրաբարձու ձառնարկներին, որոնք մը-
շտապէս երգվում են նրա անունով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ազնիւ, լուսատու գործի երկարակեցութիւ-
նը ամենամեծ միջնորդութիւնն է առաջադի-
մութեան, լուսատուութեան ճշմարիտ բարե-
կամներին համար: Ռուսաց շատ տարածված ամ-
սաղիւն է «Русская Мысль». յունվարի հա-
մարում ամսագիրը ապագրել է հետեւեալ յայ-
տարարութիւնը:

1880 թվականի յունվարի 27-ին լոյս տե-
սաւ «Русская Мысль» ամսագիրը առաջին
համարը: Մեր ամսագիրը, ուրեմն, մտաւ
երրորդ տասնամակի մէջ: Մենք արձանագ-

րեցինք ամսագրի առաջին տասնամակի եւ-
քը, կարճատեւութեամբ եւ այս երկրորդ տա-
սնամակը, երբ մենք մեր պիտի չափ աշ-
խատում էինք լուսատուութեան, գրակա-
նութեան եւ հասարակական ինքնաձեռնա-
շուկեան համար: Անպիտիօն հետեւելով մի
անգամից ընտրած ճանապարհին, մենք ձեռ-
նում էինք արձագանք տալ եւ ուսուց
կեանքի ու գրականութեան առօրեայ պա-
հանքներին: 1880 թվականի յունվարի ներ-
քին տեսութեան մէջ մենք գրում էինք, որ
մեր հրատարակութեան գլխաւոր նպատակ-
ները կը լինեն պիտի ներածին չափ աշխա-
ցել անձնատուութեան եւ ինքնավարութեան
կենդանի եւ բեղմնաւոր աճեցման: Այդ նը-
պատակները մենք համար առաջնայ պէս
թանգ են եւ սուրբ: Մեզ երեւում յանգիմա-
նում են մի տեսակ հաւաքակալութեան հա-
մար: Մենք ընդունում ենք այդ յանգիմա-
նութիւնը. մեր ամսագիրը գիտակցաբար, ի
նկատի ունենալով ուսուց հասարակական
կեանքի պայմանները, չէ սահմանափակում
հրատարակութեան ծրագրերը բացառապէս
խմբագիրների հայեացքներով. բայց ոչ մի
գիտութիւն չենք արել, ոչ մի կոպրովիսի
մէջ չենք մտել: Նոյն ոգով մենք այսուհետեւ
էլ անշուշտ կը տանենք ամսագիրը, ունենա-
լով նախկին հաւատը դէպի ուսու ժողովրդի
փայլուն ապագան եւ հոգեկան կարողու-
թիւնը:

Բերելով այս յայտարարութիւնը, «Русская
Мысль» լրագիրը թուում է մի շարք նշանաւոր
գործեր, որոնք տարիների ընթացքում աշ-
խատակցել են ամսագիրին. դրանք անուններ
են, որոնք սերտ կերպով կապված են առա-
ջադիմութեան, լուսատուութեան, ազգերի հա-
մերաշխ կողակցութեան գաղափարների
հետ: Մենք մեր կողմից կաւեցանք, որ ամ-
սագրի արած ծառայութիւնների մէջ պէտք է
յիշատակել եւ մարդասիրական ու եղբայրական
վերաբերմունքը դէպի Ռուսաստանում ապրող
այլազգիները: Չորս տարի առաջ, երբ ուսուց
մամուլի յայտնի մասը իր արշաւանքը հայերի
դէմ հասցրեց կատարութեան ամենաբարձր աս-
տիճանին, Մովսիսի ամսագիրը տպագրեց մի
շարք խելացի, փաստալից յորդանաններ, որոն-
ցով հերքվում էին հայերի վերաբերմամբ տա-
րածվող առասպելները: Այսպէս, հայակերները
սովորել էին մի գլուխ բռնակ թէ հայերը վա-
ճառականներ են. ամսագիրը վիճակագրական
տեղեկութիւններով հաստատեց, որ հայերի ա-
նագին մեծամասնութիւնը (մի քանի տեղերում
մինչեւ 90%) երկրագործ է. առում է ինչ թէ
կովկասի բոլոր հարստութիւնները հայերի ձեռ-

քում են, ամսագիրը այդ էլ հերքեց դար-
ձեալ թւանշանների բարեխիղճ ուսումնասի-
րութեամբ: Առհասարակ, «Русская Мысль»
չարունակ ուշադրութիւն է նուիրել հայերին,
ինչպէս եւ Ռուսաստանում ապրող ուրիշ ազ-
գութիւններին եւ նրա վերաբերմունքը եղել
է միշտ բարեպաշտ, արդարացի: «Русск.
Мысль» լրագիրը հետեւեալ խօսքերով է վեր-
ջացնում իր նկատողութիւնը ամսագրի մասին:
Յարգելի ամսագրին ցանկանում ենք բա-
րեւախոսութեամբ անցկացնել դեռ շատ տա-
նամակներ եւ առաջնայ պէս ծառայել առ-
սաց հասարակութեան եւ տպագրական խոտ-
քին:

Մենք էլ սրտանց միանում ենք այդ ցան-
կութեան:

*

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, յուն-
վարի 2-ին վրաց թատրոնը տօնեց իր գոյու-
թեան յիսնամակը: «С.-Петербург. Вѣд.» լրագրի
մէջ այդ առիթով լոյս տեսած մի յօդուածում
կարդում ենք հետեւեալ տողերը:

Բացի բուն վրացի դրամատուրգներից,
վրաց բնիկ համար աշխատել են նոյնպէս եւ
հայերը: Վերջիններից նախ պէտք է յիշա-
տակել Անտօնեանին, որ էրիւթով ժամա-
նակակից էր. այս տաղանդաւոր դերասանը
(ամպլուալով կօմիլ) գրեց մի քանի փարսեր
(«Ուղում եւ իշխանուհի դաւնայ» եւ այլն),
որոնցից մի քանիսն այժմ էլ մնում են
բնիկ վրա: Մասնաւոր մեծ արդութիւն ու-
նեն յայտնի հայ դրամատուրգ պ. Գաբրիէլ
Սունդուկեանցի թիֆլիսի կեանքից վերջրած
կօմիդիաները, որոնք թարգմանված են վրա-
ցերէն: Այնպէս որ, պ. Սունդուկեանցին
թատրոնական մասնագէտովի պատուաւոր
անդամ ընտրել ոչ միայն յարգանքի մի նը-
շան է դէպի նրա, որպէս թատերագրողի,
տաղանդի, այլ եւ երախտագրութեան մի
արտայայտութիւն է այն ծառայութիւնների
վերաբերմամբ, որ նա մատուցել է վրաց
բնիկ: Առհասարակ չէ կարելի չը նկատել,
որ վրաց թատրոնի յիսնամակի հանդէպ
ժամանակ վրացիների եւ հայերի մէջ կրե-
ւան եկած փոխադարձ սիրալի յարաբերու-
թիւնները միմեանս պաշտօնական են այն ա-
ռասպելի, որ մի քանի հրապարակախօսներ
տարածում են Անդրկովկասի այդ երկու ա-
մենից շատ կուլտուրական ցեղերի փոխա-
դարձ թշնամութեան մասին:

Թշնամութիւնը—մենք այս շատ անգամ
ենք կրկնել—արհեստական միջոցներով էր
պահպանվում երկու հարեւան ազգերի մէջ.
բուն ժողովրդին անձանթ էր այն անհաշու-
թեան օգին, որ վրաց ինտելիգենցիայի չօվի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Վ. ՎԵԼԻՉՈՎԻ ՖԻԼՍՈՓՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

I

Պ. Վելիչովի հեռացնելը «Кавказъ»-ի խմբա-
գրի պաշտօնից՝ նրան ներշնչող բանակի մէջ
շփոթութեան, նոյն իսկ երկրաչի անկաւածելի
նշաններ առաջացրեց: Այդ ներշնչողներն զգում
են, որ այն կործանումը, որին ենթարկվեց ի-
րանց ճուղը, չնորհիւ իր մեծ թեթեւամտու-
թեան եւ չափազանց խոտարտութեան կողմ-
նակի կերպով չօչափում է եւ իրանց, պ. պ.
Գրինգոմուտին եւ ընկերութեան, որոնք վա-
ղուց արդէն ձեռք են բերել ուսու հայրենասի-
րութեան եւ պետական ինքնատուութեան մենա-
վանդանութիւնը: Եւ նրանք չեն սխալվում: Պ.
Վելիչովն ճուղ, կարելի է ասել, նոյն իսկ զոհ
դարձաւ մայրաքաղաքի մամուլի Կեչիկովսկիներ-
ին, որոնք իրանց ծրագրի մի անկիւնում տե-
ղաւորել են հետեւեալ—անխնայ հալածանք
որ եւ է փորձի դէմ, որ կարող է լինել դուրս
գալու համար խաւարամիտ, նեղ-դասակարգու-
յին, նեղ ազգայնական ծրագրից:

Պ. Վելիչով երեկայ չէ: Ստանալով «Кавказъ»
լրագիրը Ի. Միլեւսկինից՝ նա չէր կարող չը
գիտենալ, որ ինքը լրագիրը հրատարակվելու է
ոչ թէ լուսնի վրա, այլ Ռուսաստանում—ու-
րեմն այսպէս կամ այնպէս հարկ կը լինի ուսու
մամուլը գլխաւոր ուղղութիւնների նկատմամբ:

մի որոշ դիրք ունել: Բաւական է նայել պ.
Վելիչովի «Кавказъ»-ի մէջ տպած աշխատա-
կիցների անունները, եւ մարդ իսկոյն կը հա-
կանայ, թէ պ. Վելիչովն, խմբագրութիւնը ձեռք
առնելիս, սկզբում, որ բանակին միտք ունէր
միանալ:

Վ. Սօլովեյով, Ա. Վեսելովսկի, Վ. Գոլցեյով,
Կ. Ստանիսլավսկի, Դ. Սօրոկոյեւսկի եւ այլն ան-
տարակույս չէին կարող «Кавказъ»-ին տալ յո-
ղուածներ Գրինգոմուտին եւ նրա նմանների ճա-
շակով, որոնք իրանց կատարել հալածանքով
Ռուսաստանում բնակվող այլազգիների դէմ,
յիշեցնում են այն հին ժամանակները, երբ յօրիւ-
նեց հետեւեալ պատմական առածը գաւառների
վերաբերմամբ. «Ապրիլ, ապրիլ, քանի որ
դեռ Մօսկվան հոտը չէ առել»: Պ. Վելիչովն
սկսեց բաւական վայելուչ կերպով. պաշտպա-
նելով հանդերձ պետական իշխանութեան ի-
րաւունքները նա սկզբում դեռ կարիք չէր
զգում տեղացիներին ստրուկ դարձնել կամ մե-
կին միւսը դէմ գրգռել: Բայց սկսնակ խմբագրի
հէցը առաջին քայլերի դէմ անձնաւորող բու-
ռն ձայներ լսվեցին ուրիշ ուղղութեան պատ-
կանող հրապարակախօսների կողմից:

Եւ պ. Վելիչովն չը կարողացաւ դիմադրել
Հազիւ մի ամիս անցած՝ նա շտապեց փոխել
իր ուղղութիւնը, որից յետոյ, նրա հրաւիրած
աշխատակիցների կողմից սկսեցին յայտարա-
րութիւններ հանել նրան այն մտքով, թէ հը-
րաժարվում են աշխատակցելուց: Այն ժամա-
նակ պ. Վելիչովն, արդէն բոլորովին սանձը
կտրած, կրկնակի ոյժով սկսեց փարատել

իր կարճ ժամանակեայ ուղղութեան հետքը,
երբ նա ծառայում էր համբերողութեան եւ ի-
րաւունքների հաւատարմութեան կորստաբեր
վարդապետութեան: Նա իր յարձակումներին
նպատակակէտ ընտրեց ընկանաբար հայերին,
նախ՝ որովհետեւ նրանց վրա էր մատ-
նանիլ լինում մայրաքաղաքների մամուլի
ծրագրերը. եւ երկրորդ՝ որովհետեւ նրանք
են կազմում այն տարրը, որ ամենից ա-
ւելի գործունէայ է, ուստի եւ իր վրա ու-
շադրութիւն է գրաւում, իրենց ոչ անվտանգ
մրցակից ուրիշ ազգերի եւ նոյն իսկ ուսուների
դէմ՝ առեւտրի եւ մոտաւորական արուեստների
ասպարէզում: Շուտով ապագրէք եկաւ հարցը
օգնելու այն գաղթականներին, որոնք տա-
նակ հազարներով փախել էին թիւրքերայից եւ
ապաստան գտել Ռուսաստանում: Բացվում էր
յարմար առիթ թողնելու հին հայրենիքը եւ
բոլորին, առանց կրօնի եւ ազգութեան խնո-
րութեան, հրաւիրելու. (—ինչպէս լինում է
այժմ, պ. Վելիչովի հեռանալուց յետոյ),
երկրաչափի վաշխառուների նկատմամբ—) կե-
րակելով ու դարձնելով այն երեւերին եւ այրի-
ներին, որոնք մնացել էին քրիստոնէական կը-
րօնի համար կոտորված հայերից յետոյ: Բայց
այդպէս չը դուրս եկաւ: Հէց այդ րօպէն էլ
ընտրեց պ. Վելիչովն՝ հալածանք սկսելու հա-
նապակարութիւնը անհասկանալի տեսակէտից
(նոյն իսկ գիւղական դասակարգի, որ 80%
կազմում) եւ թշուառ գաղթականներին նորից
թիւրքեր քնելու անհրաժեշտութիւնը: Ինչպէս

երեւում է, պ. Վելիչովն բառացի մտքով էր
ընդունել վրաց հեղանկան այն առածի իմաս-
տը, թէ «Խիլի ընկածին» եւ գրել էր նրան իր
ծրագրի մէջ. բայց եթէ նրա ծրագրի այս կէ-
տը դեռ չէ իրագործվել, այդտեղ, ի հարկէ,
մեղաւոր չեն պ. Վելիչովն եւ նրա մայրաքա-
ղաքացի հովանաւորողները: Այնուհետեւ քանի
գնաց՝ այնքան աւելի խրվեց պ. Վելիչովն եւ
նրա գաղթվող հայերի եւ մասնաւորապէս
թիֆլիսի քաղաքային դուսայի դէմ վերջ ի
վերջոյ այն ատրիճանին հասաւ, որ նոյն իսկ
ամենահասարակ հարցերի մասին խօսելիս, ինչ-
պէս են հասարակական գրադարան, ձեռքբեր
եւ այլն—փրկուր էր ժայթքում բերանից: Իսկ
թէ աչքան բան ապագրելով հայերի դէմ, իր
գաղնակիցների միջոցով բերանացի ինչիւր կը
լինէր տարածելիս նրանց մասին—այդ հաս-
կանալի է ինքն ըստ ինքեան: Պ. Վելիչովն, որ
վիճարանութիւնների մէջ գերազանցում էր մենակ
խօսելը, քան երկու կողմից խօսակցութիւնը՝
բանն այնտեղ հասցրեց, որ ամեն կրեւոլի
վրա տարածվեց ստորին պաշտօնեանների խորա-
միտ քաղաքականութեան կասկածաբանութիւնը:

Հեղա չէր շուշկ ջաշկ այս վարակած օ-
ղում երեք տարի շարունակ: Բայց պ. Վելիչ-
ովն դիմացաւ—չէ կարելի ուրանալ նրա նկար-
դերի դիմացկանութիւնը: Մի բան էր նրան
վշտացնում—այն է, որ լրագիրը աւելի առա-
ջադիմում էր քան դատարանը, որ չէր կարո-
ղանում շարանաւորութեան հետք անգամ գտնել
Ռուսաստանին ի բնէ հաւատարիմ հայերի գոր-
ծողութիւնների մէջ:

Հին Հրապարակախոս

